

19170

133

891.99
4 - 70

Cm2h  
1894

Ա. Մելիք

ՕՏԱՐՈՒԹԻՒՆԻՑ ՀԱՅՈՒՆԻՔ ԴԱՐՁԱԾ

ԹՐՉԱԿԱԲ

138

Ա. ՌԳՈՍ

Խոտես մար

Բայց այս



200

ՃՈՒՃԻ

Տպարան Շուշու Հայոց Հոգեոր Տեսչութեան:

1894

391.99

Հ - 70

291.99  
5-70

Քյուրիքչյան Ա. Ա.

Օսմանիթիկից ՀաՅութիւնի Դաշտան

# ԹՐՈՉԵԼԻԿԸ

Ա. Հ. Պ. Ռ.



ՃՈՒԾԻ

Տպարարան Շուշու Հայոց Հագեստ Տեսչութեան:

1894

1881

42404-62

Օտարութիւնից հայրենիք դարձած թոշնիկը.

Дозволено цензурою Тифлисъ, 6 Июня 1894 года.



26017-61

Մի անգամ աննշան թռչուններից մէկը քաղցից ստիպուած մտաւ մի նաւ, որի տախակամածի վրայ նաւաստիներից առատօրէն թափուած հացի փշանքները տեսնելով ուրախացաւ: Նա առանց մտածելու որ նաւը հեռանում է ափից, ուրախ-ուրախ թռչոտում էր նաւի մի ծայրից միւսը, երբեմն էլ բարձրանալով կայմի վրայ իւր փոքրիկ կացով փորում էր իւր կուշտ փորը, այնպէս որ՝ նաւը այնքան հեռացաւ, որ այլևս այդ թռչնիկը չկարողացաւ ափ գուրս դալ և այսպէս նա հեռանալով հայրենի քաղցր երկրից մտաւ մի այլ անձանօթ երկիր, որտեղ նա իբրև պանդուխտ սկսեց իւր ապրուսաը որոնել:

Այդ տեղ նա տեսաւ իւր ցեղակիցներին, որոնք սիրով ընդունեցին նրան: Նա մինչեւ անգամ զարմանալով իւր ցեղակիցների ազատ նիստ ու կացի և նրանց վայելում բարօրութեան վրայ՝ ուրախանում էր որ հանգամանքները իրեն այդպիսի մի վիճակի հասցըրին: Նա շատ անգամ ինքը՝ մրէն հարցնում էր—ինչո՞ւ իմ հայրենիքում հալածգում ենք թէ՛ մարդկանցից և թէ՛ զանազան տեսակ որսացող

թռչուններից, մանաւանդ անխիղձ բազէներից, բայց ոչ մի եղակացութեան չէր հասնում: Երկար տարիներ այդ երկում մնալուց, նրանց նիստ ու կացը սովորելուց յետոյ մի անգամ նա իր ցեղակիցների ժողովում այս հարցը առաջարկեց:

— Իմ բարեկամներ, ինչու դուք, որ միևնոյն թռչուններս ենք, այստեղ առանց մի յայտնի նեղութեան և հալածանքի էք ապրում, իսկ իմ թշոււառ հայրենիքում իմ սեւթաղտ ազգակիցները տանջվում, հալածվում, կոտորվում են թշնամիներից և ոչ մի բանով ապահով չեն:

Ժողովի նախագահը պատասխանեց թէ՝ առաջին պատճառը թէ ձեր և թէ ձեզ հալածողների անկրթութիւնն է և երկրորդ՝ որ ոչ դու և ոչ քո ազգակիցներդ ձեր չափը չէք ձանաչում: Եթէ դուք ձեր չափը և ձեր պարտքը ձանաչէք, գուցէ այդքան էլ չհալածուէիք:

Մեր պանդուա թռչնիկը իր համար մի ծրադիր կազմելով իբր թէ հայրենիքի օգտին, մի օր մնաք բարեւ ասելով իրեն հիւրասիրող օտար երկացիներին, մտաւ առաջուայ նման մի նաւ և լի յոյսերով վերագարձաւ դէպի իւր ծնըն-

դավայրը: Նրա ազդակիցները, բարեկամները և ծանօթները, որոնք կարծում էին որ այլիս նա կենդանի չէ, յանկարծ տեսնելով նրան բոլորովին փոխուած, գերացած, մեծացած, շատ ու լախացին և դիմեցին նրա առաջը:

Տեսարանը սրտաշարժ էր: Ուրախութեան արցունքով համբուրում էին միմիանց, ոստոստում էին նրա շուրջը և այսպէս հասցըին նրան իւր վաղեմի բունը բայց մեր թռչնիկը այնքան մեծացեր, գերացել և քնքացել էր, որ այդ ծրառա փոքրիկ բունի մէջ զժուար էր բնակուել:

Քանի օր անցնելուց յետոյ մեր թռչնիկը սկըսեց իւր ծրադրի համաձայն գասեր տալ իւր ցեղակիցներին, որոնք լսելով նրա իրենց համար մինչև այդ օրը չըսուած յուսագրական խօսքերը՝ սկսեցին բռնել նրա շուրջը և հնագանդուել նրան: Բայց մի բան, որ ամենահարակաւորն էր, նա շուտով մոռացաւ, այնիւ նա չձանաչեց իւր չափը և իւր ուժից վեր սկսեց մեծամտել և ազմուէկներ հաներ, այնպէս որ նրա շրջապատողները տեսնելով նրա վնասակար ընթացքը և միայն իւր շահերի համար մտածել միանդամայն հեռացին նրանից: Նա էլ

Խայտառակուած խոյս տուաւ իւր քաղաքից  
իր նման մէկի հրաւիրանօք դէպի մի այլ եռ-  
նապտատ անկիւն:

Տարուայ երեք եղանակներում իրենց ապ-  
րուստը անտառներում, լեռների ստորոտներում,  
ձահիձներում և զովիտներում մորոնող թռչուն-  
ները փախչում էին դէպի մարզաբնակ աեղեր,  
որպէս զի կարողանան ձմեռուայ ժամանակ  
իրենց ապրուստը գտնել:

Այդ ժամանակ էլ մեր ընդհանուրի օգտին մտա-  
ծող գիմակի տակ իւր գոյութիւնը պահպա-  
նող ազատամիտ ձեւացած թռչնիկը հասաւ Շ.  
Քաղաքը, որտեղ և բարեկամացաւ թեթեամիտ  
կաչաղակի, ագռաւի և ձայտկի (գուլաշ) հետ.  
մէկի հետ եղայր, միւսի հետ կնքահայր և  
երրորդի հետ խորհրդակից գտունալով:

Ընթերցողը կզարմանայ թէ՛ ի՞նչ բարե-  
կամական կապ կարող էր լինել այդ երեք  
լշակեր սեաթոյը թռչունների և մի աննշան  
կուտակեր թռչնիկի մէջ: Սրանից ամեն մէկը  
իւր անձնական օգուտն էր փնտում և այդ  
իրենք էլ զիաէին.

Նաբաթը մի անգամ հերթով հրաւիրում էին  
միմիանց մեր նոր խնամէացած թռչունները:

Նրանց խօսակցութեան զիսաւոր նիւթն էր՝  
ինչպէս անել որ կարողանան մշտական բնա-  
կութիւն հաստատել Շ. քաղաքում և ապրել  
այդ տեղ ազատօրէն, առանց բազէներից հա-  
լածուելու և առանց քաղցածութեան կարիք  
զգալու: Երկար ու բարակ մտածելուց յետոյ  
մեր կրթուած թռչնիկը, որ խելքով բարձր էր  
իւր ընկերներից, ասաց. — որովհետեւ մեր  
ընդհանուրի ցանկութիւնն է մշտապէս բնա-  
կութիւն հաստատել այստեղ և անհցյն բարե-  
կամութիւն անել ուստի ևս հարկաւոր եմ:  
Համարում այստեղ ընիկ տեղացի ցեղակիցնե-  
րից մէկի հետ խնամէանալ: Այս ամուսնական  
կապը հաստատելուց յետոյ կարող ենք մենք  
շատ բարեկամներ գտնել և սրանց միջոցով  
բուն գնել այն մեծ հասարակաց լի շտեմարանի  
տանիքում և ի հարկէ, այնուհետեւ մի այն  
կարող ենք ապրել ինչպէս փայելն է ըստ մեր  
ցանկութեան:

Կաչաղակը, ագռաւը և ձայտկը, որ բերանները  
բացած լսում էին ազատամիտ թռչնիկի առա-  
ջարկութիւնը՝ միաբերան գովիցին նրա խել-  
քը և ծափահարելով ընարեցին նրան ժողո-  
վի նախագահ ու խորհրդատու:

Գարնան ամենագեղեցիկ օրերից մէկն էր Մելքիմակաւոր թռչնիկը դուրս եկաւ Շ. բաղաբի այդին պարտելու և այդ տեղ տեսներով իւր հետ ծանօթացած բարեմիտ թռչնիկին իւր ընկերուհու հետ, ասաց. — բարե Զեզ, ինչ պէս էք սիրելի բարեկամ, ինչպէս էք անց կացնում Զեր օրերը:

— Ենորհակալ եմ, բարեկամ, ահա՝ տեսնում էք էլի . . . :

— Ճշմարիտ, նախանձնում եմ պատասխանեց դիմակաւորը:

— Նախանձուելու տեղիք ըստնիք, ես իմ ապակայ ընկերուհին եմ գտել, Դուք էլ կարող էք Զերը գտնել, պատասխանեց բարեմիտ թռչնիկը:

— Միթէ, աւելացրաւ դիմակաւորը զարմացած. շնորհաւորում եմ բարեմաղթելով Զեզ բարեբաստիկ օրեր և աջողութիւն:

Բարեմիտ թռչնիկը դիմակաւորի այդ խօսքերից ուրախացած, ասաց իւր ընկերուհուն.

— Սիրելիս, խնդրեմ ծանօթացէք այս օտար թռչնիկի հեա, որի հետ ես էլ նոր եմ ծանօթացած:

Ողորմելի միամիիտ թռչուն. եթէ դու ճանա-

չեիր քո այդ նոր դիմակաւոր բարեկամիդ, որ քո սիրուհուդ քո զրկից յետոյ պիտի գողանայ, իսկոյն և եթ թքելով նրա վայ՝ կհեռանայիր նրանից: Բայց դու այդ արիր միայն այն ժամանակ, երբ քո անազնիւ և փոփոխամիտ սիրուհիդ իւր երդումը տրժեց շնորհիւ դիմակաւոր և կեղծ բարեկամիդ և նրա կնքահայր ագռաւին: Երանի թէ դու քո սիրուհուդ ծանօթացրած ըլինէիր այդ քսու դիմակաւորի հետ: Ահա՛, նոս այսօր անազնւութեամբ խեց քո սիրուհուդ և վաղը քո ներկայութեամբ պիտի պսակուէ. իսկ դու պիտի տանջուիս ու տուրուիս թէ ինչո՞ւ իմափրամբ բացի դիմակաւորին:

Դիմակաւորի հարսանիքը շատ կարծ միջոցումկայացաւ: Կնքահայրն էր լշակեր ագռաւը. իսկ կաչաղակը և Ճայակը թռչնուելով յածախ մտնում էին խոհանոցը և իրենց քաղցած փորը կշացնելով ուրախութիւն դուրս էին գալիս դիմակաւորի առաջ պարուն. Մի խօսքով, դիմակաւոր թռչնիկի հարսանիքը մեծ ուրախութիւն պատճառեց իրեն և նրա բարեկամներին ու զանակիցներին, որովհետեւ այդ հարսանիքով նրանք շատերի հետ բարեկամանալով՝ կարծեցին թէ հասել են իրենց ցանկութեան

և հեշտութեամբ պիտի տիրէն հատիկներով  
լի շահմարանին

Իրաւունք ունէին այդպէս էլ կարծելու, որով-  
հեաւ շտեմարանի տէրը մասամբ կօյր էր և  
խուլ ոչ լաւ տեսնում էր և ոչ էլ լսում:

Նա մի ծերացած բազէ էր և նրա հասունա-  
ցած զաւակները հեռացած էին գէպի այլ գա-  
ւառներ: Եւ այս բնական է, որովհետեւ զիշատիչ  
թռչունները համ սակաւածին են համէլ միմ-  
անց չպատառելու և միմիանց կերակուր չխը-  
լելու համար միմիանցից շատ հեռու են ապ-  
րում:


Կաչաղակի, ագռաւի, ձայակի և իրենց նախա-  
զահի ուրախութեան շափ ու սահման չկար:  
Նրանք մի այնպիսի աղմուկ էին բարձրացրել  
մեր ծերունի բազէի շտեմարանի շուրջը, որ  
ողջ մնացեալ թռչունների տեսակները մնացել  
էին նրանց յանտգնութեան վրայ զարմացած:  
Նրանք աղաս, համարձակ թռչուում էին  
կօյր բազէի առաջ երբեմն ծաղրելով և երբեմն  
էլ կտցահարելով նրան և իրենց բուների  
համար նիւթերու էին հաւաքում շտեմարանի  
տանիքի վրայ:


Մեր կօյր բազէի զաւակները լսելով այդ յան-


տուզը թռչունների գաւազըրութիւնը իրենց  
հօր գէմ, առաջ չէին հաւատում բայց յետոյ  
գաղտնի զիտելով նրանց յիմար սպառնական  
բոնած զիրքը, սպատում էին վեհանձնաբար  
նրանց յարձակմանը:

Հասաւ ժամը, այլեւ բազէի որդիքը չկարողա-  
ցան տանել այն արհամարանքը ու վիրաւո-  
րանքը, որ այդ սեաթոյր և աղբակեր թրո-  
չունները իրենց զիմակաւոր նախագահով ու-  
ղեցին տալ իրենց հօրը, նրա հասարակաց  
օգտին պահած շտեմարանը սեպհականացնելու  
մոքով: Թափառուին բազէի հարազատ որդիքը  
իրենց թեւերը, կայծակի արագութեամբ պա-  
ցին գէպի այդ ստոր թռչունները և պատառ  
պատառ անելով, նրանցից շատերին ձգեցին  
գետնին, մի քանիսն էլ քարերի, պատերի ծա-  
կերը մանելով այլեւ չէին համարձակում լցո  
աշխարհ դուրս գար:

Պարսից մի առածքը սրանց նմանութիւն է  
բերում: Կաքաւին ասացին թէ հաւատացնում  
ենք, որ դու 300 տարի կապրես, եթէ յան-  
տրդնութեամբ ամբողջ օրը դուրս չգտն բարերի  
վրայ կաղկղա—կաղկղադ երգես:







Унф



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Ազգային Գրադարան  
Ազգային Գրադարան

19170



Գնել ցանկացողները կարող են դիմել  
Եռշխ. գ. Հայտիեանցին:

2013

